Տիգրան Մուկուչյան
ԿԸՀ նախագահ

Ծնվել է 1969թ. փետրվարի 8-ին Երևանում:
1986-1987թթ սովորել է թիվ 13 պրոֆտեխուսումնարանի <<Ռադիոէլկտրոնային սարքերի մոնտաժող>> բաժնում:
1987-1989թթ ծառայել է խորհրդային զինված ուժերում:
1989-1995թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:
1989–1991թթ. աշխատել է Երևանի <<Հայարդկապ>> փորձարարական գործարանում որպես ֆրեզերագործի աշակերտ, ապա՝ ֆրեզերագործ:
1991-1993 թթ. աշխատել է ՀՀ Գերագույն խորհրդի ֆինանսատնտեսական վարչությունում որպես էլեկտրամոնտյոր:
1993-1995թթ աշխատել է ՀՀ Գերագույն խորհրդի քարտուղարության իրավաբանական բաժնում որպես ավագ վիճակագիր:
1995-1996թթ աշխատել է ՀՀ Ազգային ժողովի իրավաբանական բաժնում որպես ավագ խորհրդատու:
1996-1997թթ աշխատել է ՀՀ Ազգային ժողովի իրավաբանական ծառայությունում որպես իրավաբանական-տեղեկատվական կենտրոնի ղեկավար:
1997-1998թթ. աշխատել է Երևանի քաղաքապետարանում որպես իրավաբանական բաժնի պետ:
1998թ.(ապրիլ-օգոստոս) զբաղեցրել է Երևանի քաղաքապետի գլխավոր խորհրդականի, այնուհետև՝ քաղաքապետի աշխատակազմի ղեկավարի պաշտոնները:
1996-1998թթ եղել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ:
1998-2000թթ եղել է որպես ՀՀ վիճակագրության, վերլուծության և պետական ռեգիստրի նախարարի տեղակալ, ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրի վարչության պետ:
2000-2003թթ. աշխատել է որպես ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ,

պետական ռեգիստրի պետ:
2003-2005թթ. աշխատել է որպես ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:
2005թ-2007թթ. եղել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի նախագահ:
2008-2010թթ. եղել է ՀՀ վարչական դատարանի նախագահ:
2010-2011թթ. եղել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի նախագահ:
2011թ. սեպտեմբերին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ, ընտրվել հանձնաժողովի նախագահ:
Ամուսնացած է, ունի չորս երեխա: